

կարողացան առաջատար տեղ զբաղեցնել համաշխարհային տնտեսությունում: Մասնավորապես, այսպես առաջացավ «ճապոնական հրաշքը»¹:

Վարկերը դասակարգվում են ըստ մի շարք հատկանիշների՝

1. ըստ տրամադրվող գումարի ծավալի՝ մանր, միջին, խոշոր, որը յուրաքանչյուր բանկի և հաճախորդի համար որոշվում է անհատապես՝ կախված կողմերի ֆինանսական հնարավորություններից,
2. ըստ վարկառուների՝ պետական, բանկային, ֆինանսական վարկային հիմնարկների վարկեր,
3. ըստ փոխառուների՝ անհատական, այսինքն՝ մասնավոր անձանց, բանկային, արդյունաբերական, պետական և այլն,
4. ըստ օգտագործման՝ ներդրումային, սպառողական, արտահանման, ներմուծման, արժեթղթերի օպերացիաների համար,
5. ըստ ժամկետների՝ կարճաժամկետ(մինչև 1 տարի), միջնաժամկետ (5-7տարի), երկարաժամկետ (7 և ավել տարի):

Հաշվարկային օպերացիաները տնտեսական սուբյեկտների միջև իրականացվող օպերացիաներն են, որոնք կարող են լինել ինչպես կանխիկ, այնպես էլ ոչ կանխիկ ձևով: Վերջինիս դեպքում վճարողի հաշվից գումարը փոխանցվում է ստացողի հաշվին:

Բանկի ոչ ավանդական ծառայություններից են՝ միջնորդային ծառայությունները, ձեռնարկությունների զարգացմանը ուղղված ծառայությունները՝ բորսայի ներդրումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը, իրավաբանական օգնությունը, ինֆորմացիոն ծառայություններ և այլն, երաշխիքների տրամադրումը, ձեռնարկությունների հաշվապահական օգնություն և այլն:

Կախված ծառայությունները ստացող սուբյեկտներից տարբերում են՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ: Գործնականում այս կամ այն անձին մատուցվող ծառայությունների հավաքածուն կարող է մույնը լինել տարբեր բանկերում, տարբեր են միայն տրամադրվող գումարի չափերը:

Բացի այդ, մատուցվող ծառայությունները կարող են լինել վճարովի և անվճար: Սակայն դա չի նշանակում, որ բանկային ծառայության այս կամ այն տեսակը մշտապես վճարովի է կամ անվճար: Բանկը ինքն է որոշում է, թե որ ծառայությունն է վճարովի, իսկ որը անվճար: Այսպես՝ հաշվարկային, վարկային և դեպոզիտային օպերացիաների կազմի շատ օպերացիաներ կարող են իրականացվել անվճար: Ելնելով դրանից հաճախ բանկային ծառայությունները բաժանվում են մաս եկամուտ բերողի և չբերողի, բանկի և էժանի:

Նյութական արդյունքի հետ կապված լինում են՝ նյութական արդյունքի շարժի հետ կապված ծառայություններ և գույք ծառայություններ: Բանկերը իրենց դրամական օպերացիաներով նպաստում են նյութական արդյունքի շարժին, իսկ տվյալ ծառայությունները բանկի համար ստեղծում են նոր լրացուցիչ արդյունք:

Ջուտ ծառայությունները մատուցվում են կազմակերպություններին և քաղաքացիներին²:

Առաջատար բանկերը ակտիվորեն ընդլայնում են իրենց մատուցած ծառայությունների շրջանակը, բարձրացնում հաճախորդների սպասարկման որակը: Բանկերը իրենց հաճախորդներին առաջարկում են՝ արագ և ընթացիկ հաշիվների բացում և իրացում, էմիսիոն սինդիկատի բանկային մուրհակ, խնայողական սերտիֆիկատների, ինչպես նաև հասարակ բաժնետոմսերի ձեռքբերում, անհրաժեշտ ինֆորմացիայի տրամադրում, հաճախորդի անհատական սպասարկում³:

Այսպիսով՝ բանկերը հանդիսանում են ձեռնարկություններ, որոնց նպատակը բանկային արդյունքի ստեղծումն է: Վերջիններիս թվին է պատկանում նաև բանկային ծառայությունը, որը հաճախորդների պահանջ-մուծքների բավարարմանը ուղղված գործողություն է:

ՄԱՐՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Բորանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հանրային բարիքների նկատմամբ երկրի բնակչության պահանջմունքի բավարարումը ցանկացած պետության կարևոր գործառնություններից է: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Խորհրդային Հայաստանում այդ պահանջմունքը պլանավորվում էր և բավարարումը կազմակերպվում էր պետության կողմից:

ՀՀ-ում պլանային տնտեսությունից շուկայական համակարգին անցումը ուղեկցվեց հանրային կառավարման բարեփոխումներով և տեղի ունեցած հանրային ծառայությունների բաշխում նոր ձևավորված տարածքային միավորների, մասնավոր հատվածի և պետության միջև: Այդ ծառայությունների մատուցման ոլորտում առաջացան տեսանկյունային պարզորոշման կարիք ունեցող մի շարք խնդիրներ: Դրանք հիմնականում կապված էին հանրային ծառայությունները մատուցող երեք հատվածների՝ համայնքների, մասնավորի և

¹ Саничев М.С. Банковская система в условиях рыночной экономики. Алма-ата, 1991. С.7-8.

² Бабичева Ю.А. Банковское дело: Учебник. М., 1999 г. с.312-313.

³ Там же: с.342.

պետության միջև բաշխման օպտիմալ հարաբերակցության, այդ ծառայությունների նկատմամբ պահանջ-մունքի որոշման, այն բավարարելու գործընթացի կազմակերպման, արդյունավետ իրականացման և այդ ոլորտին առնչվող մի շարք այլ հարցերի հետ:

Վարչատարածքային բաժանումով ձևավորված նոր տարածքային միավորներին՝ համայնքներին վերապահվեցին հանրային ծառայությունների որոշակի հատվածի մատուցման լիազորություններ, մինչդեռ դրանց զգալի մասը չունեն դրանք իրականացնելու ֆինանսական միջոցներ, կադրային ներուժ և փորձ: Դա բերեց նրան, որ համայնքներում կտրուկ նվազեց մատուցվող հանրային ծառայությունների որակը և քանակը: Պետության և մասնավոր հատվածի կողմից ՀՀ համայնքների բնակչությանը հանրային ծառայությունները մատուցվում էին անհավասարաչափ՝ տարբեր համայնքներում բնակչությունը ուներ այդ ծառայություններից օգտվելու տարբեր հնարավորություններ:

Եվ, չնայած, տրամաբանորեն երկրի քաղաքացիները անկախ բնակության վայրից պետք է նույնանման հնարավորություններ ունենան օգտվելու հանրային բարիքներից, ստեղծեց այնպիսի իրավիճակ, որ ՀՀ համայնքների միջև առաջացավ կյանքի պայմանների և կենսամակարդակի զգալի տարբերություններ, որը պատճառ դարձավ նաև տնտեսական զարգացման անհավասարաչափությունների, ներքին և արտաքին միգրացիայի և մի շարք այլ բացասական երևույթների:

Ըստ համայնքների բնակչության մատուցվող հանրային ծառայությունների իրավիճակի վերլուծությունը և բարելավման մոտեցումների ձևավորումը պահանջում է այդ հասկացության միանշանակ մեկնաբանություն, այդ ծառայությունների կազմի և կառուցվածքի հստակեցում և վերլուծություն: Ներկայացնենք առաջադրված հարցերի շուրջ գոյություն ունեցող տեսակետները և մեր նկատառումները:

Ըստ Մակմիլանի բացատրական բառարանի «Հանրային բարիքը դա ապրանքներն ու ծառայություններն են, որը մեկ սպառողին տրվելու դեպքում մնում են հասանելի նաև մյուսների համար՝ առանց լրացուցիչ ծախսումների: Դա այն հիմնական հատկանիշն է, ըստ որի հանրային և մասնավոր բարիքները միմյանցից տարբերվում են»¹: Ըստ այս սահմանման կարելի է ասել, որ հանրային ծառայություններին բնորոշ է ոչ մրցակցային սպառումը կամ այլ կերպ ասած, որևէ սպառողի կողմից սպառումը չի նվազեցնում նրա հասանելիությունը մյուս սպառողների համար:

Հանրային բարիքների մրցակցային սպառման հասկացությունը հավանության է արժանացել նաև Սամուելսոնի կողմից:

Սամուելսոնը գտնում էր, որ այդ բարիքներին հատուկ է

ա) սպառման ժամանակ ոչ մրցակցային լինելը,

բ) ոչ բացառիկ լինելու հատկությունը, այսինքն արտադրողը (մատուցողը) չի կարող խոչընդոտել սպառումը անկախ սպառողի ով լինելուց²:

Իտալացի խոշոր տնտեսագետ Ռիզո Մացցոլան գտնում է, որ «Հանրային բարիքների առանձնահատուկ բնույթն այն է, որ դրանց սպառումը պետք է լինի համատեղ և հավասար. ինչքան շատ է հասնում մի տնային տնտեսությանը, այդքան ավելի, այլ ոչ պակաս է բաժին ընկնում ցանկացած մյուսին»³:

Ըստ Դ.Վիկսելի հանրային բարիքների նկատմամբ կիրառելի չէ նախապատվությունների տեսությունը: Նա գտնում է, որ հանրային բարիքների նկատմամբ համատեղ պահանջարկից հետևում է, որ շուկայական մեխանիզմները չեն կարող սպառողներին մղել հանրային բարիքների նկատմամբ նախապատվություններ արտահայտելու⁴:

Ըստ անգլիացի ժամանակակից տնտեսագետ Մ.Բլաուդի հանրային ծառայությունների բնույթն այնպիսին է, որ ոչ մի առանձին անհատի որոշում չի կարող ազդել հանրային բարիքների գումարային առաջարկի վրա և յուրաքանչյուրը օգուտ է ստանում հանրային բարիքից, անկախ այն բանից, վճարում է դրա համար, թե ոչ:

Հանրային ծառայությունների էության և բնույթի շուրջ սահմանումները ներկայացվածով չեն սահմանափակվում, սակայն, կարծում ենք, որ այսքան էլ բավական է տնտեսագիտական այս հասկացության վերաբերյալ ընդհանրացումներ կատարելու համար:

Բարիքների թիվը, որոնք կրավարարվեն սահմանումներում առանձնացված պայմաններին խիստ սահմանափակ են: Այսպես, գրեթե բոլոր սահմանումներում մենք առնչվում ենք հանրային բարիքների երկու բավականին տարբեր հատկությունների հետ: Հանրային բարիքը, եթե հասանելի է ինչ-որ մեկին, այն պետք է հասանելի լինի բոլորին (հանրային ծառայությանն անդրադառնալիս պետք է տարածքային առումով լրացուցիչ սահմանափակում դրվի): Սա ձևակերպվեց որպես անսահմանափակ օգտագործման հատկություն: Որպես երկրորդ հատկություն առանձնացնենք ոչ մրցակցային լինելը, այսինքն որևէ մեկի կողմից դիմ սպառումը չպետք է խոչընդոտի մյուսների կողմից սպառմանը: Ըստ քիչ բարիքներ են, որ կրավարարեն այս երկու հատկություններին: Այսպես, ծանրաբեռնված ճանապարհը հասանելի է բոլորին, սակայն չենք կարող ասել, որ մրցակցությունը բացակայում է: Նույն ձևով, կրթությունից ստացվող տնտեսական օգուտը անհատին է, կրթության համակարգում ներդրված ռեսուրսներ ձեռք են բերվում շուկայի միջոցով: Այնուամենայնիվ կրթությունից սպասվող օգուտը հանրային է և կրթությունը դառնում է հանրային բարիք, իսկ կրթության ապահովումը՝ հանրային ծառայություն:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ հանրային ծառայությունների էության վերաբերյալ ներկայացված մոտեցումները կրում են տեսական ընդհանուր բնույթ, իսկ գործնականում հանրային ծառայություններին են դասվում անգամ այն ծառայությունները, որոնք բավարարում են նշված հատկանիշներից գոնե մեկին:

¹ Макмиллан. Словарь современной экономической теории, 1997.

² Самуэльсон П.Э. "Экономика", 1985г.

³ М.Н.Пестон. Public Good and Public Sector, 1972.

Բերված սահմանումները թույլ են տալիս եզրակացնել, որ շուկայական հայտանիշներից ոչ մեկը չի կարող բացատրել, թե ո՞րն է հանրային բարիքների օպտիմալ քանակը:

Ըստ Վիկսելի հանրային բարիքների օպտիմալ քանակը կարող է որոշվել միայն քվեարկությամբ: Կարծում ենք, որ հանրային բարիքների բաղադրիչ հանդիսացող հանրային ծառայությունների մատուցման ծավալի որոշման համար հիմք կարող են դառնալ ըստ առանձին տեսակների հանրային ծառայությունների համար չափորոշիչների համախումբը, որի ձևավորումը կպահանջի լուրջ տեսամեթոդական աշխատանքներ:

Հանրային ծառայությունների էության շուրջ արված դատողություններից ելնելով, ներկայացնենք ՀՀ համայնքների կողմից իրականացվող հանրային ծառայությունների կազմն ու իրավական հիմքերը:

ՀՀ Սահմանադրությամբ ընդունվեց համայնքներում տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքը, սահմանվեց տարածքային միավորները և տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտի ձևավորման հիմքերը: Այդ հիմնադրությամբ իրենց հետագա զարգացումն ստացան «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որում սահմանվեցին տեղական ինքնակառավարման լիազորությունները, դրանք իրականացնելու սկզբունքները, կառավարող մարմինները, համայնքի բյուջեի աղբյուրները, կառուցվածքը, ձևավորման մեխանիզմները և տեղական ինքնակառավարման կայացման համար անհրաժեշտ հիմքերը: Ըստ այդ օրենքի տեղական ինքնակառավարման կարևորագույն գործառույթը՝ բնակչության շահերից ելնելով տեղական նշանակության խնդիրների լուծումն է:

Նկատենք, որ տեղական նշանակության խնդիրների ցանկը հստակեցված չէ և տարբեր պետություններում դրանց շրջանակները տարբեր են և որոշվում են ՏԻՄ-երին տրված լիազորություններով և դրանց լուծման իրավասություններով:

ՀՀ-ում պետության գործառույթների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև կատարվեց աստիճանաբար: Արդյունքում ՏԻՄ-երին հանձնվեց ըստ ոլորտների հետևյալ ծառայությունների իրականացման լիազորությունները. մախապարտական և մասնագիտական դպրոցների կառավարումը, առաջին բուժօգնության կազմակերպումը, ակումբների, գրադարանների, մշակույթի տների, թատրոնների, թանգարանների, հանգստի վայրերի, սպորտային հիմնարկների կառավարումը, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները, ջեռուցման կազմակերպումը, աղբահանությունը, բարեկարգումը և կանաչապատումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ներհամայնքային ճանապարհները, փողոցային լուսավորությունը, հասարակական տրանսպորտը, իշխանական լիազորությունները (նոտար, ՁԱԳՄ և այլն), քաղաքացիների և սպառողի շահերի պաշտպանությունը և այլն:

Բոլոր համայնքներին, անկախ նրանց չափերից և սոցիալ-տնտեսական իրավիճակից, վերապահվեցին նույնանման լիազորություններ: Սակայն, չնայած իրենց վերապահված լիազորություններին, վարչատարածքային բաժանմամբ ձևավորված տարածքային միավորները ունեին նյութատեխնիկական բազայի և ֆինանսական միջոցների տարբեր հնարավորություններ և դրանց զգալի մասը ի գործ չէր իրականացնելու այդ գործառույթները:

Այդ լիազորությունների հետ միասին ՏԻՄ-երի իրավասությանը փոխանցվեց այդ գործառույթների իրականացմանը ծառայող շինություններն ու գույքը: Այն բնականաբար, ենթադրում էր նաև դրանց պահպանման, վերանորոգման և շահագործման ծախսեր, որոնք դեռևս ֆինանսապես չկայացած համայնքները չէին կարող կատարել:

Բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում էլ տեղական իշխանությունները առնչվում են միևնույն խնդրին՝ ինչպես համաձայնեցնել սեփական ֆինանսական և վարչական ռեսուրսները անսահման կոնկրետ գործերի հետ, որոնք անմիջական ֆինանսական հատուցում չեն տալիս: Սակայն այս պարագայում, խոսքը վերաբերվում է ոչ թե ռեսուրսների սահմանափակությանը, այլ երբեմն սեփական միջոցների լրիվ բացակայությանը:

Ֆինանսական ռեսուրսների բացակայությունը և փորձի պակասը բերեց նրան, որ համայնքներին հանձնված շինությունների և գույքի զգալի մասը շարքից դուրս եկավ, ենթարկվելով ֆիզիկական և բարոյական մաշվածքի, իսկ որոշ մասն էլ օգտագործվեց ոչ նպատակային՝ հիմնականում օտարվեց: Բերենք մեկ օրինակ:

Այսպես, 1998թ.-ին հանրապետությունում գրանցված էր 856 մանկապարտեզներ, որոնց թիվը 2005թ.-ին կրճատվել էր 233-ով: Ծինությունների և գույքի նվազման դինամիկան խիստ անհավասարաչափ է ըստ մարզերի: Երևան քաղաքում մանկապարտեզների թիվը կրճատվել է մոտ 25%-ով, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 50%-ով¹:

Նկատենք, որ ՏԻՄ-երն իրավասու են որոշումներ ընդունել եղած հաստատությունները փակելու, վերակազմավորելու և նորերը բացելու վերաբերյալ և գործադիր իշխանությունները դրանց միջամտելու իրավասություն չունեն: Կարծում ենք, որ ՏԻՄ-երին տրվող իրավասությունները կարելի էր տալ աստիճանական մոտեցումով և այդ իրավասությունները ընդլայնել կառավարման փորձի ձեռքբերմանը համընթաց: Նման մոտեցումը կնպաստեր հանրային ծառայությունների համար պահանջվող շինությունների և գույքի պահպանմանը: Այս ամենը պատճառ դարձան հանրային ծառայությունների մատուցման անհավասարաչափության, որն էլ ունեցավ իր ծանր հետևանքները ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Չնվազող իրավիճակի բարեփոխման խնդիրը արժանացել է կառավարության և հանրության ուշադրությանը, այդ ուղղությամբ իրականացվել են որոշակի մասնակի ծրագրեր:

Պահանջվող հանրային ծառայությունների կազմի և կառուցվածքի ճիշտ բնութագրումը և կանխատեսումը, դրանց ապահովման արդյունավետ իրականացումը, տնտեսության զարգացման վրա ակնկալվելիք ազդեցության հիմնավորված գնահատումը, ինչպես նաև այդ ոլորտի մի շարք այլ հարցերը իրենց բարձր

¹ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2002-2005», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, 2006:

կարևորությամբ ներկայումս դասվում են հրատապ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական խնդիրների շարքին:
Կարծում ենք, որ հանրային ծառայությունների մատչելիությանն ու ապահովմանը ծառայող նշված խնդիրների լուծումները պահանջում են համալիր մոտեցում, և այն կարելի է իրականացնել համակարգային մոտեցման սկզբունքների հիման վրա ձևավորված նպատակային ծրագրերի միջոցով, որը պետք է ներառի վարչատարածքային բարեփոխումների, օրենսդրաիրավական փոփոխությունների, վերապահված լիազորությունների դիֆերենցման և վերաբաշխման և հարցի լուծմանն օժանդակող այլ ենթածրագրեր:

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՈՒՄ

Կազմակերպությունների ֆինանսական գործունեության հետ կապված կառավարչական որոշումների կայացման գործընթացը պարունակում է բազմաբնույթ ռիսկեր, որի պատճառ են հանդիսանում լիարժեք տեղեկատվության բացակայությունը, շուկայում առկա անորոշությունը, կազմակերպության գործունեության միջավայրի պատահական և ոչ պատահական բնույթի բազմաթիվ գործոններ: Պայմանավորված վերը նշված հանգամանքով՝ մեծ կարևորություն է ստանում գործունեության ընթացիկ ռիսկերի գնահատմանը և կառավարմանը գույքահետ, կազմակերպության բյուջեի ձևավորման փուլում ներուժային ռիսկերի գնահատման համակարգի մշակումը և ներդրումը: Բյուջեի կազմման ընթացքում ռիսկերի նշված գնահատման համակարգում առանցքային դեր են խաղում հնարավոր կորուստների վերլուծությունը և կանխատեսումը, ընդ որում կորուստներն ունեն պատահական բնույթ և պայմանավորված են փաստացի իրավիճակի շեղումներով սպասվող իրադարձությունների ընթացքից: Կանխատեսման պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են շուկայական պահանջարկի և գների անորոշությունը, ինչպես նաև ոչ շուկայական բնույթի այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ պայմանագրային պարտավորությունների չկատարման հավանականությունը, տնտեսվարման կանոնների չպահպանումը և այլն:

Այսպիսով, իրադարձությունների չնախատեսված տարբերակով զարգացման արդյունքում կորուստների առաջացման հավանականության (ռիսկի) գնահատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել բյուջեի կատարման վրա ազդող գործոնների դասակարգում, դրանց կարևորության և ազդեցության աստիճանի գնահատում, այնուհետև դրանց վրա հիմնված տնտեսամաթեմատիկական մոդելի մշակում:

Կազմակերպության բյուջեի կատարման վրա ազդող գործոնները դասակարգվում են երկու խմբի՝ արտաքին և ներքին գործոններ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ինչպես կանխատեսելի, այնպես էլ ոչ կանխատեսելի, պատահական կամ անորոշ տարրեր: Արտաքին գործոնները ընդգրկում են կազմակերպության գործունեության հետ անմիջական առնչություն չունեցող հանգամանքներով պայմանավորված գործոնները, որոնք կախված են երկրում տիրող տնտեսական և քաղաքական իրավիճակներից: Արտաքին գործոնները կարող են գնահատվել, վերլուծվել և կանխատեսվել կազմակերպության կողմից, դրանց բացասական ազդեցության հնարավորինս մվազեցման նպատակով կազմակերպությունը կարող է մշակել համապատասխան միջոցառումներ, սակայն դրանք չեն կարող կառավարվել կազմակերպության կողմից: Այս խմբի գործոնների օրինակ կարող են հանդիսանալ օրենսդրության, պետության կողմից վարվող հարկային քաղաքականության անսպասելի փոփոխությունները, սղաճը, մրցակցության սրումը, տարերային աղետները և այլն, որոնք բյուջեի կազմման ժամանակ կարող են դեռևս քողարկված բնույթ ունենալ, որոնց հաշվի առնումը բյուջեի կազմման փուլում և կանխատեսումը էքսպերտային գնահատումների կամ տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդներով, սակայն, անհրաժեշտ պայման է՝ հետագա կորուստներից խուսափելու համար: Ներքին գործոնները պայմանավորված են կազմակերպության գործունեությամբ, կարող են գնահատվել, կանխատեսվել և կառավարվել կազմակերպության կողմից: Ներքին գործոններից են՝ մատակարարների և դեբիտորների կողմից պարտավորությունների չկատարման հնարավորությունը, սպառողների կողմից տարածածակետ վճարումները, կառավարման թերությունների պատճառով կորուստների առաջացման հնարավորությունը, կազմակերպության իրացվելիության խնդիրների հնարավորությունը, կառավարման արդյունավետության անկման հնարավորությունը, աշխատակիցների սխալներով պայմանավորված կորուստների հնարավորությունը և այլն:

Բյուջեի կազմման գործընթացում ռիսկերի գնահատման ալգորիթմի մշակման նպատակով՝ վերոհիշյալ ռիսկերը խմբավորվում են հետևյալ երկու խմբերում.

- ✓ Եկամուտների չստացման ռիսկ (տվյալ հոդվածի գծով բյուջեով նախատեսված եկամուտների թերակատարման ռիսկ),
- ✓ բյուջեի ծախսային մասի ավելացման ռիսկ (տվյալ հոդվածի գծով բյուջեով նախատեսված ծախսերի գերակատարման՝ գերածախսի ռիսկ):

Կազմակերպության բյուջեի կազմման գործընթացում ռիսկերի գնահատման առաջարկվող ալգորիթմը ենթադրում է՝ ամբողջ բյուջեի և ըստ առանձին եկամտային և ծախսային հոդվածների կատարման հավանականության գնահատում, բյուջեի կատարման ընթացքում պլանավորված եկամուտների չստացման և պլանավորված ծախսերի գերակատարման արդյունքում հնարավոր կորուստների գնահատում: Բյուջեի